

Pezufer Sheep

"Lyans n. ualysus Zeegegahay"

9(47.925)

7-62

1930

8414

19 AUG 2006

28-5-30

Յաւելուած ԵՐԵՒԱՆ-ի

Թիւ 2

Ի Ն Զ Պ Է Ս Ծ Ն Ա Ի

"ԱԶԱՏ ՈՒ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆ"



7.925)

-62

Պ Ա Ր Ի Զ

Տպարան Պ. ԷԼ. ԷԿԵԱՆ

1930



9 (47.525)

հ-62 ԱՅ.

Ի՞նչՊէս ձննի

“ԱԶԱՏ ՈՒ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԸ”

Դաշնակցութիւնը կը յայտարարէ թէ իր պայքարներուն, զոհողութիւններուն չնորհիւ է որ ձեռքբերած է «Ազատ ու անկախ Հայաստանը»:

Ան պարզապէս կը խարէ ժողովուրդը:

Դաշնակցութիւնը Մայիս 28ը կը տօնէ իրեւ յաղթանակի, իրրեւ ուրախութեան օր մը:

Ան գարձեալ կը խարէ ժողովուրդը, որովհետեւ Մայիս 28ը եղած է ո՛չ թէ յաղթանակի, այլ պարտութեան օր մը, ո՛չ թէ ուրախութեան, այլ սուդի օր մը:

Կ'ուզենք դիմել պատմութեան, ապացուցանելու համար այս բոլորը:

ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

1917ի փետրուարին կը ծագի ոռւսական առաջին յեղափոխութիւնը, որը իշխանութեան գլուխ կը բերէ կաղետները, սօցիալիստ-յեղափոխականներն ու մենչեվիկները «ժամանակաւոր կառավարութիւն» առուան տակ, սպասելով Համառուսական Սահմանադիր ժողովի գումարումին:

304389

304389

Նոր բեմիմին հետեւանքը այն կրլայ կովկասի մէջ, որ փոխ-արքայութիւնը կը վերնայ, Նիկոլա Նիկոլաեվիչը կը հեռանայ ու կովկասը կը կառավարուի «Առանձին կոմիտէ»ի մը միջոցով, զոր կը նշանակէ ժամանակաւոր կառավարութիւնը, 1917 թուի մարտին:

Առանձին կոմիտէն կը բաղկանար երկու վրացիներէ՝ Ա. Չիւենկելի և Ք. Ապաշիճէ, մէկ ոռւսէ՝ Խարլամով, մէկ թուրք-թաթարէ՝ Քաֆարօֆ, և մէկ հայէ՝ Մ. Պապաջանեան:

Ահա՝ այդ ժամանակ կը կազմուին հայ, վրացական եւ թուրք-թաթարական Ազգային Խորհուրդները, որոնք իրենց ազգայնական ծրագրութիւններով հող կը պատրաստեն կովկասի ապագայ ազգամիջեան պատերազմներուն և քառին:

Ի՞նչ ողի կը կրէ հայ Ազգային Խորհուրդը, ի՞նչ զործ կը տեսնէ: Խոսքը տանք լէօին:

«Խորհուրդի անդամների մեծամասնութիւնը ի հարկէ դաշնակցականներից էր, բայց միւս կուսակցութիւններն ալ ունէին իրենց ներկայացուցիչները, համեմատ իրենց ունեցած պատգամաւորների թւի. մի հատ տեղ էլ տուել էին անկուսակցականներին, Ստեփան Մամիկոնեանին»:

«Այստեղ ահա՛, յեղափոխութեան մէջքի վրայ նըստած հասարակական դիրքի բարձրերն էր թեակոխում մի մարդ — Աւետիս Անարոնեանը: Նա ընտըրւում է Ազգային Խորհուրդի նախագահ: Ազգային Խորհուրդներ իրենց համար ընտըրեցին նաև վրացիներն ու թուրքերը: Դրանք իսկապէս ազգային կա-

ոավարութիւններ էին, իւրացնում էին գերագոյն վարչական գործառնութիւններ — տուրքներ նշանակել, զօրաժողով յայտարարել, ևայլն . . .

«Ես մի երկու անգամ եղել եմ Անարոնեանի թագաւորութեան մէջ, Ազգային Խորհրդում . . . : Գործերը բաժանուած էին պատշաճաւոր մինիստրութիւնների մէջ. գիտէի որ պատերազմական մինիստրը Ստեփան Մամիկոնեանն էր, Գիլնանսների մինիստրը՝ Սամսոն Յարութիւնեանը. ինքը նախագահը վարում էր արտաքին գործերը, ևայլն, ըստ կարգին: Ի՞նչ պաշտօն ունէր Նիկոլ Ազրալեանը. հաստատապէս չգիտեմ, կարծեմ Խորհուրդի քարառուղարն էր: Բայց այդ չէ գլխաւորը: Նա զբաղւում էր մի փոքրիկ սենեակում, իսկ սենեակի պատից կախուած էր մի շատ մեծ աշխարհագրական քարտէզ, որի վրայ հաստ գունաւոր շերտով նշանակուած էին Հայստանի սահմանները: Այս սահմանագիծը նրա սեփական աշխատանքն էր: Ամէն մէկին մօտեցնում էր քարտէզին և սկսում էր բացատրութիւններ տալ: Սահմանագիծը երկույատկութիւն ունէր — բնական և ազգագրական բաժանութեր: Ցիշտ որ նա շատ խնամք էր թափել այդ աշխատանքի վրայ. նա գիտէր իւրաքանչիւր լեռ, իւրաքանչիւր փոքրիկ գիւղ: Բնական բաժանութերի կողմից սահմանը միանգամայն կայուն և ապահով էր: Բայց ազգագրական բաժանութերի կողմից գիծը յաձափի խանգարում էին թիւրքաբնակ գիւղերը, իւրմերով թէ հատ-հատ: Բայց այս մեծ հոգս չէր Ազգային Խորհուրդի աշխարհագրագէտի համար: Այդ ազ-

գագրական խոչընդոտները նա վերացնում էր դաշ-
նակցական հոչակաւոր «սրբել-մաքրելու» միջոցով։
Աղքալեանը աջ ձեռքի բոլոր մատները կիսով չափ
թիակաձեւ դնում էր այդ թրքական սահմաններից
դուրս, ցոյց տալով, թէ թուրք ազգաբնակութիւնը
դուրս կը շպրառուի սահմանի այն կողմը և այսպիսով
կը վերականգնուի այս կամ այն տեղի գուտ անխառն
հայկականութիւնը՝ Զարմանալի սէր ունէր այդ շնոր-
հալի գրողը դէպի թուրք գիւղերի սրբումն ու մաք-
րումը։) Եւ ես յիշում եմ մի ժողով, ուր երբ Նիկոլ
Աղքալեանը վեր կացաւ և յայտարարեց թէ Անիի մօտ
եղած քիւրդ գիւղերը «մաքրուած» են, Միքայէլ Պա-
պաջանեանը խոնարհեց դէպի ինձ և Սամսոն Յա-
րութիւնեանը և ասաց. «Մինիստր պօ Պօղոմնը գե-
լամ» — (ջարգերու նախորար)։

«Ուրիմն, գաշնակցական տաքտիկն, գործողու-
թեան եղանակը մնում էր հինը . . . Վթիւրքաց Հա-
յաստանի հարցը չէր այժմ, ուզում էին Հարաւային
Կովկասում մի Հայաստան, որ չունենար իր մէջ կամ
շատ քիչ ունենար թիւրքութիւն։) Եւ ո՞րքսն նոր ա-
զէտներ ծոսեցին այս ապուշ ցանկութիւնից հայ ժո-
ղովուրդի համար . . .»

Վ Բնականաբար նոյն ազգայնամոլական թոյնով
վարակուած էին և վրացի ու թուրք-թաթար Ազ-
գային Խորհուրդները, որոնք կը բաղձային ունենալ
միապաղ ու միատարր Վրաստան ու Աղքակեջան, «սըր-
բենք-մաքրենք»ի մեթոտներով . . .)

ՀՈԿՏԵՄԲԵՐԵԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Կը պայցթի Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը՝
Վրացի մենչեվիկ լիտըրները, Զխէիձէ, Ծերեթելի
կ'ապաստանին Կովկաս։ Ատելութեամբ վառուած դէպի
պոլեւիկեան յեղափոխութիւնը, այդ մարգեկը, որ
ցարիզմի ժամանակ ամենաթունդ կողմանիցներն
ու պաշտպաններն եղած էին միացեալ ու մեկ Ռու-
սաստանի, կը սկսին դաւաճանել իրենց հաւատամքին և
կ'աշխատին Կովկասը Ռուսաստանէն բաժնել։ Այդ
գործին համար անոնք զօրել աջակից մը կը գտնեն
Մուսավաթի մէջ, որ իր պանթուրանսկան, պան-
թուրքական ձգտումներով կը կոռւէր ո՞չ միայն սո-
վեդական, այլ և առ հասարակ Ռուսաստանի դէմ։

Հայ պուրժուազին, նախ՝ իր աշխարհագրական ու
քաղաքական դիրքին բերումով, յետոյ այն պատճա-
ռով, որ թոյլ էր ու շրջապատուած վրացի ու թաթար
ֆէտալիզմի յարձակողական նացիոնալիզմով, կողմա-
կից էր ոռւսական օրիենտացիայի։ Ան շատ լաւ կը մ-
րունէր, որ առանց ոռւսական «հովանիցին», չէր կրնար
հանգիսա ընել։ Վրացի և թուրք նացիոնալիզմները
այս բանին համար ալ սրտանց կատէին Հայերը։

1917ի նոյեմբերին կը յայտարարուի թէ Անդըր-
կովկասը պիտի ունենայ կառավարական նոր կազմա-
կերպութիւն մը, փոխանակ Առանձին Կոմիտէին, մին-
չեւ Համառուսական Սահմանադիր ժողովի գումարումը։
Այդ կառավարութիւնը Աէյմի, (աեղական պար-

լամենտ) կառավարութիւնն է։ Բայց մինչև Սէմմի գումարումը՝ ծնունդ կ'առնէ մարմին մը՝ Անդրկովկասեան Կոմիսարիատ անունով, ուր գերակշիռ դեր կը կատարեն նախ մենչեւիկները, յետոյ մուսավաթականները։

Կոմիսարիատը առաջին քայլը կ'առնէ Կովկասը Խ. Մուսատանէն անջատելու համար։ Կը յայտարարէ զօրացրում Կովկասի ճակատի ոուսական բանակին, գէնքի տակ պահելով միայն այդ բանակին մէջ գըտնուող ազգային՝ վրացի, թաթար, հայ զօրամասերը։

Պարզ է, ուրեմն, որ այն պնդումը թէ ոուսական բանակը պոլչեւիկեան յեղափոխութենէն յետոյ թողուց հնացաւ Կովկասէն, անպայտապան ձգելով այս վերջինը, անամօթ սուտ մըն է։)

Մուսավաթականները, իրենց մեղսակից ունենաւով մենչեւիկները, ինչպէս և զաշնակները, քանի որ Անդրկովկասեան Կոմիսարիատը կազմուած էր երեք Կուսակցութիւններու ներկայացուցիչներէն, սկսան յարձակիլ ոուս գիւղներուն վրայ, «սրբել մաքրելու» նպատակով։ Այդ գազանները կը պաշարէին նաև զօրացրումի հետեւանքով իրենց երկիրը վերադարձող ոուս զինուորները, կը կողուատէին, յաճախ կը սպանսէին զանոնք, տիրանալու համար անոնց զենթերուն։ Շամիսրի մէջ մենչեւիկներն ու թաթարները թակարդ մը լարեցին նոյն իսկ ոուս զօրամասի մը, որ կը բաղկանար 3.000 հոգիէ ու ջարգեցին ոչ միայն զինուորները, սպաները, այլ մինչև իսկ այս վերջիններուն կիներն ու երախանները . . .

Մուսական բանակի արձա՛ռւմով, Կովկասէն կ'անհետանային ոուսական իշխանութեան հետքերը իրենց դլխուն մնացած կովկասեան հակայեղափոխականները սկսան ուտել զիրար։ Հայ - թաթարական ընդհարութեան ծայր տուին, ճի՛շդ ինչպէս 1905-1906 թուականներուն, Մուսավաթականները չէին ձգեր, որ հայերը ճամբորգեն երկաթուղիով, կայրաններէն կ'իջեցնէին զանոնք ու կը մորթէին։ Իսկ գաշնակները զբաղուած էին «սրբելով ու մաքրելով» Սուրմալուի գաւառի թուրք ազգաբնակութեան մեծ մասը։

Եւ մտածել որ այս քարբարոս փոխ-յարաբերութիւններու մէջ գտնուող կազմակերպութիւններն էին որ իրենց ներկայացուցիչներուն ձեռքով՝ բազմած փոխարքայի պալատը, իրեւ անդամ Անդրկովկասեան Կոմիսարիատին, կ'ուզէին կառավարել երկիրը համեռաշխարար։

1918 թ. յունուարին կը գումարուի վերջապէս Սէյմը։ Մինչդեռ Վրացիներն ու Թուրքերը կը մասնակցին իրենց այլ և այլ կուսակցութիւններով օրէնքողրական այդ ժողովին, Հայերը, բացի զաշնակներէն, ո՛չ մէկ ուրիշ ներկայացուցիչ ունէին։ Դաշնակցութիւնը կը յոխորար թէ ինքը կը կազմէ ամբողջ հայութիւնը և իրմէ դուրս հայութիւն չկայ։

1917 թ. զեկտեմբերին կնքուած էր զինազագար մը էնվէր փաշայի և կովկասեան բանակներուն միջև և որոշուած էր սահմանագիծ մը, ուրկէ չպիտի կրնային անցնել երկու կողմի ուժերը։

1918թ. սկիզբները թուրք հրամանատարութիւնը կ'առաջարկէ հաշտութեան բանակցութիւններ սկսիր Անոր նպատակն է ո՞չ թէ հաշտութիւն, այլ խաղալ կարգ մը ինտրիգներ, որոնց չնորհիւ կովկասը պիտի ստիգէ պաշտօնապէս խզել իր կապը Խորհրդային Ռուսաստանէն, որպէս զի իր ձեռքերը ազատ զգար Բրեստ-Լիտովսկի դաշնագրի պարտաւորութիւններէն:

Սրբարև այդ դաշնագրի հիման վրայ Վեհիբ փաշայի բանակը իրաւունք չունէր անցնելու Կարս-Արդահան-Բաթումի գծէն, մինչեռ Երիտասարդ Թուրքերը մատրած էին, իրականացնելու համար իրենց համաթուրքական ծրագիրը, իջնել Բագու, տարածութիւնագույն կայլու:

Կովկասը Խ. Ռուսաստանէն անջատուելուն պէս, Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը չէր կրնար այլևս խոչընդուռ մը ըլլալ թուրք բանակի յառաջխաղացութեան գլուխ կովկասի սիրտը:

Դաշնակցութիւնը հիանալի կերպով ծառայեց Թրքական այս ծրագրին, Փօխանակ պինդ կպելու Մոսկուային և Բրեստ-Լիտովսկի դաշնագիրին, տարուած իր նացիոնալիստական ցնորքներով, կողմակից հանդիսացաւ պատերազմի, գերադասելով սակաւաթիւ պուրժուազիի շահը հայ աշխատաւոր ճնշող մեծամասնութեան շահէն, երես դարձուց Մոսկուային, բոռնցք ցոյց տուաւ Հոկտեմբերեան Յեղափոխութեան:

Կովկասի ամբողջ ուազմաճակատը կը պաշտպանէր հայ ուժերով, որոնք քայլագայուած, պարտասած

էին, իւրաքանչիւր գունդ հազիւ 200էն 400 զինւոր ունէին:

Ն Հակառակ այս անմիխթար կացութեան, Ա. Զամալիանը ճակատէն հանգստացնող լուրեր բերած էր. ան կը հաւատացնէր թէ թրքական բանակը կազմալուծուած է, թէ թուրք զինւորները, սովահար՝ դասալիք եղած են, թէ ճակատի 7 վերստ տարածութեան վրայ ո՞չ մէկ թուրք զինւորի չեն հանդիպած հայ զօրքերը:

Ազգային Խորհուրդը՝ սրտապնդուած այս սուտ ու խարդախ տեղեկատուութենէն, սկսաւ ուազմաշունչ կոչեր հրատարակել, հրաւիրելով հայերը երթալ «հայրենիքը» պաշտպանելով Զօրքի հետ կը հաւաքուէր, բնականարար, դրամ ու նուէր:

Դաշնակներու ուազմափրութիւնը հայ ժողովուրդի կենսական շահերուն դէմ բացայայտ զաւածանութիւն մը կը կազմէր այն պատճառով մանաւանդ որ ան շատ լաւ գիտէր թէ մուսավաթականները ոչ միայն չէին ուզեր կոռուիլ թուրք բանակին դէմ, այլ և, ընդհակառակը, ամէն միջոցներով կ'աշխատէին զիւրացնել անոր արշաւանքը մինչեւ Բագու:

Դաշնակ շէֆերը շատ լաւ գիտէին նոյնպէս որ վրացիները, նասիոնալիստներէն սկսած մինչեւ սոցիալիստ մէնչեվիկները, պիտի կռուէին այնքան ժամանակ, որքան պէտք պիտի ըլլար պաշտպանելու համար Բաթումը:

Ամէն պարագայի մէջ մերժել Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը, կը նշանակէր հայ տանջուած, սպառած

զանգուածները ողջակէզ դարձնել թուրք անզուսպ
իմպերիալիզմին:

Դաշնակցութիւնը՝ ծնած ու մեծացած արիւնոտ ար-
կածախնդրութիւններու մէջ, չէր կրնար չնետուիլ
այդ նոր, սարսափելի արկածախնդրութեան գիրկը:

Եւ սակայն մինչդեռ Դաշնակցութիւնը աւելորդ
գոհեր կը պատրաստէր թոքական թնդանօթներուն
համար, Վեհիբ փաշան բոնաբարելով զինադադարը և
զինադադարով որոշուած սահմանագիծը, կը շարժի
գէպի երգնկա, զոր կը պաշտպանէր Մուրատի հրոսա-
խումբը, կը գրաւէ քաղաքը ու կը յառաջանայ գէպի
երգրում, յայտարարելով որ կանգ պիտի առնէ միայն
ոռւսական զօրքերուն առջեւ:

ՏՐԱՊԻԶՈՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անդրկովկասի կոմիսարիատը տեսնելով կացու-
թեան ծանրութիւնը, կրշտապէ ընդունիլ թուրք հրա-
մանատարութեան առաջարկը՝ հաշտութեան բանակ-
ցրւթիւններ վարելու: Սյու բանակցութիւնները տեղի
պիտի ունենային Տրապիզոն: Կոմիսարիատը լիազօր
պատուիրակներ կը նարէ: Պատուիրակութեան մէջ կը
մտնեն չորս վրացի՝ երկու մենշեւիկ, մէկ սոցիալիստ
ֆէտէրալիստ եւ մէկ նացիոնալ-դէմոկրատ. հինգ
թուրք-թաթար՝ երկու մուսավաթական և երեք սո-
ցիալիստ զանազան գունաւորումներով և երկու հայ՝
երկուքն ալ դաշնակցական՝ Քաջազնունի և Խատիս-
եան: Պատուիրակութեան նախազահ կը նշանակուի

մենշեվիկ Զիսենկէլին: Թուրք պատուիրակութեան
մէջն է ախրահոչակ Ռասուլ Զադէն, Վլրացիները,
թուրքերը և Հայերը կը տանին իրենց հետ զինւորա-
կան և այլ բազմաթիւ խորհրդականներ, հայ խոր-
հրդականներուն մէջ են նաև Ռուրէն փաշան և
Լէօն:

Պատուիրակութեան կուտան միաձայնութեամբ
հրահանգներ պաշտպանելու երկու զլիսաւոր կէտ.—
1. Զիջել թուրքերուն 1914ի սահմանները, այսինքն
պատերազմի ընթացքին ոռւս բանակին կողմէ դրա-
ւուած հողամասերը միայն և հետեւարար չավալ ո՛չ
կարսը, ո՛չ Արտահանը չև ո՛չ Բաթումը, 2. Պաշտպա-
նել թրքահայաստանի ինքնավարութեան սկզբունքը,
թուրք պետութեան լրջանակին մէջ:

Պէտք կայ նկատելու որ երկրորդ պահանջը՝ որը
գրուած էր, ինչպէս ըսինք, միաձայնութեամբ,
ընդունուած էր թուրքերուն և Վլրացիներուն կողմէ
յետին նպատակով: Վլրացիները պարզապէս սակար-
կութեան նիւթ մը պիտի դարձնէին փրկելու համար,
եթէ կարելի էր, Բաթումն ու Արտահանը, իսկ թուր-
քերը կը մտածէին զէնք հայթայթել Պօլսի կառա-
վարութեան՝ վիմեցնելու համար Տրապիզոնի բանակ-
ցութիւնները և շարունակելու զրոհը, քանի որ ան-
վիճելու փաստ մըն էր թէ ոչ միայն թուրք-թաթար-
ները, այլ և վրացիները կողմանակից չէին «հայկական
զատին»:

Պատուիրակութիւնը դեռ ճամբայ չընկած, Խոր-
հրդային Ռուսաստանը կը փութայ փրկութեան գե-
րան մը երկարել կովկասի խեղդուողներուն.

Բաթումի մէջ կըստացուի Կարախանի ստորագրութեամբ ուստի մը, որ կը յայտնէ թէ Խ. Ռուսաստոնի և Գերմանիայի ու անոր զինակիցներուն միջեւ կնքուած է դաշնագիր մը Բրէստ-Լիտովսկի մէջ, որուն համաձայն՝ Թուրքիային կը վերադարձուին 1878ին կորսնցուցած Բաթումի, Արդահանի և Կարսի սանձաքները:

Խ. Ռուսաստանը այդ զիմումը կընէր Անդրկովակասեան Կոմիսարիատին, համոզուած ըլլալով որ Կովկասը՝ տկարացուծ ու պառակտուած՝ չպիտի կրնար դիմադրել թրքական արշաւանքին: Բայց վրացիները, թուրք-թաթարները, որոնց կը միանան դատարկամիտ դաշնակները, բարկութեամբ ետ կը մղեն իրենց երկարուած օգնութեան ձեռքը ու բողոքելով տօնաքիցօդաբար Բրեստ-Լիտովսկի դաշնագրին դէմ, կը վճռեն երթալ Տրապիզոն բանակցելու համար:

Վեհիր փաշան վերջին անգամ կը պահանջէ պարպել Բաթումի, Արդահանն ու Կարսը: Բայց Կոմիսարիատը դարձեալ կը մերժէ ու կը պնդէ բանակցութիւններու իր առաջարկին վրայ:

Երիտասարդ թուրքերը ուրախութեամբ կընդունին բանակցութեան առաջարկը՝ բայց ո՛չ թէ Բրեստ-Լիտովսկի սահմանագծի մասին վիճելու նպատակով, այլ, ընդհակառակը, աւելի ծանր պայմաններ հարկադրելու համար Կոմիսարիատին:

Հէօն իբրեւ ականատես ու մասնակից անցուգարձերուն, հետաքրքրական ու համեղ յայտնութիւններ կ'ընէ: Այսպէս երբ պատուիրակները հաւաքուած էին

ծրագիր մշակելու, Պ. Խատիսեան կը յայտարարէ, մեծ հաճոյք պատճառելով թուրք-թաթար պատուիրակներուն, թէ Դաշնակցութիւնը որոշած է փոխել իր քաղաքական օրիենտացիան և հետեւիլ այսուհետեւ արեւելիան՝ այսինքն թրքական ուղղութեան, փոխանակ արեւմտեան և հիւսիսային (ոռուսական) ուղղգծերուն:

Իսկ թաթարները ոգեւորուած կ'աշխատէին համոզել որ Կովկասի ժողովուրդներու կենասկան շահը կը պահանջէ միանգամ ընդ միշտ վերջ դնել ուսերու տիրապետութեան և քշել զանոնք Կովկասէն:

Կովկասեան պատուիրակութիւնը հասնելով Տրապիզոն, օրերով չի կրնար նոյն իսկ ցամաք իջնել նաւէն, որովհետեւ Պալսի պատուիրակները չէին ժամանած գեռ: Թուրք իշխանութիւնները թոյլ կուտան միայն Տրապիզոն ցամաք իջնել նասուլ Զադէի նախագահութեան տակ գտնուող թուրք-թաթար պատուիրակութեան, որ տեղեակ կը պահէ տնշուշտ թուրք կառավարութիւնը Կովկասեան պատուիրակութեան տրամադրութիւններուն, անոր տարակարձութիւններուն ևլն.:

Թուրք կառավարութեան պատուիրակները զայրոյթով ու գայթակղութեամբ ետ կը մղեն «հայկական հարց»ի, թրքահայաստանի ինքնազարութեան պահանջը, իսկ լսել անդամ չեն ուղեր Բրեստ-Լիտովսկի դաշնագրի սակարկութեան մասին: Կարսը, Արդահանը, Բաթումը մաս կը կազմեն Կովկասին, իսկ Կովկասը՝ Ռուսաստանին, կըսեն թուրքերը, եթէ Կովկասը կ'ուզէ նոր դաշնագիր կնքել թուրքիայի հետ, պէտք է որ նախ

յայտարարէ ինքզինքը Ռուսաստանէն անկախ պետութիւն։

Ի՞նչ կարելի էր առարկել յայսքան տրամաբանական պահանջի մը։

Թուրք-թաթար պատուիրակները ստիպողաբար կը պնդէին ընդունիլ թրքական առաջարկը։ Վկրացիները, սկսելով Զիսենկելիին, կը ջանային թուրքերուն հետ առաջին հանդիպումէն իսկ անջատ հաշտութիւն մը կնքել, Բաթումը փրկելու համար։ Զիսենկելիի աջ բազուկը, յայտնի չօվէն Վեշապելին, ֆէս գրած, գլուխը կը զարնէր ասդին-անդին այդ նպատակով։

Թուրքիան՝ կարձ կապելու համար, վերջնադիր մը տուաւ կովկասի պատուիրակութեան, որպէս զի Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը ընդունին։ Զիսենկելին, տեսնելով որ ուրիշ ճար չկայ, հեռագրեց Կոմիսարիատին թրքական վերջնագիրը, յանձնարկելով ստիպողաբար, որ Բրեստի դաշնագիրը ընդունուի։

Սէյմը մերժեց թրքական վերջնագիրը և հրամայեց իր պատուիրակութեան վերադառնալ Թիֆլիս։ Միւս կողմէ պատերազմ յայտարարեց Թուրքիային։ Սէյմի մահմետական ֆրակցիան կարուկ կերպով հրաժարեցաւ մասնակցիլ այդ պատերազմին։


Թուրքերը սկսան յառաջանալ, պատերազմական գործողութիւնները կը ծաւալէին արդէն կարսի շրջակայքը։ Սարիդամին ինկած էր։ Ռազմական գործողութիւններու ջախջախիչ բեռը կը տանէին միայն հայ դժբախտ զինորները։

Քաջազնունին մանրամասն զեկուցումով մը, որուն մէջ կը հաստատէր թէ անկարելի էր պատերազմ մղել թուրքերուն զէմ, կ'առաջարկէր խորհրդակցական ժողովի մը մէջ ընդունիլ Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը և հաշտութիւն կնքել Բայց նորէն հրապարակ կու գայ դաշնակցական տօնքիշոտութիւնը։ «Մենք ուժունինք, մենք կը դիմաղրենք, ևնո։»

Սէյմի ուզմատենչ տրամադրութիւնը երկար չտեւեց։ Կառավարութիւնը հրաժարեցաւ և կազմուեցաւ նորը՝ Զիսենկելիի նախագահութեամբ, որը անմիջապէս բանակցութիւններ սկսաւ թուրք հրամանատարութեան հետ։ Զիսենկելիին քանի մը աննշան նախարարական աթոռներ տուեր էր նաև դաշնակցականներուն, բայց առանց նախարարական ժողով մը իսկ գումարած ըլլալու, հետեւաբար առանց իր հայ պաշտօնակիցներու գիտութեան, կը հրամայէ անմիջապէս յանձնել կարսը Թուրքիրուն։ Դաշնակցական նախարարները հրաժարական կուտան, բայց երկու օր յետոյ ետ կ'առնեն իրենց հրաժարականները, չզրկուելու համար իշխանական աթոռներէն։ Կարսի շրջանի ամբողջ հայութիւնը յանկարծակիի եկած՝ կը թողու ամէն ինչ ու կը սկսի փախչել Անդր կուտայ կործանարար գաղթականութիւնը։

31/83

100-4
30/38



ՍԵՅՄԸ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ ԿՈՎԿԱՍԸ ԱՆՁԱՏՈՒԱԾ
ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

Կարսի գնով զինադադար կնքուեցաւ և հաշտութեան նոր բանակցութիւններ սկսուեցան Բաթումի մէջ:

Սէյմը՝ Թուրքերու պահանջին վրայ՝ ապրիլ թին՝ Անդրկովկասը յայտարարեց անկախ հանրապետութիւն՝ կարհնալ բանակցելու համար Բաթումի մէջ Պոլսի կառավարութեան հետ:

Ահա՝ այդ րոպէէն կը սկսի Անդրկովկասի ամբողջ աշխատաւորութեան արիւնոտ գողգոթան:

Մուսավաթականները, որ մերժած էին մասնակ, ցիլ Սէյմի Թուրքիայի դէմ յայտարարած պատերազմին, շտապեցին պատուիրակներ զրկել Բաթում, մասնակցելու համար հաշտութեան բանակցութիւններուն:

ԲԱԹՈՒՄԻ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այստեղ, Անդրկովկասի պատուիրակութեան՝ որուն կը նախագահէր դարձեալ նոյն Զիւնկելին և որուն կը մասնակցէին Քաջազնունին, Խատիսեան և Մ. Պապաջանեան, կը սպասէր նոր ցաւագին անակնկալ մը, Խալիլ պէյ, դատական նախակին նախարար ու Թուրքերեսփոխանական Ժողովի նախագահէր, բանալով հաշտութեան ժողովը կը յայտարարէ թէ Թուրքիայի

հաշտութեան պայմանները այն չեն, ինչ էին Տրապիգոնի մէջ: Հասկանալի է:

Ապրիլ 11ին, Կարսը մենշեւիկներուն կողմէ դաւդրորէն Թուրքերուն յանձնուելէ յետոյ, Վեհիք փաշայի բանակը յառաջ կը շարժուէր Բաթումէն, որ ընկած էր Թուրքերուն ձեռքը, գրեթէ առանց դիմադրութեան, մարտ 31ին, գէպի Թիֆլիս և Կարսէն ու Ալեքսանդրապոլէն գէպի Բագու, պատճառելով գաղթ, դասալքութիւն և անպատմելի խուճապ:

Հետաքրքրութենէ զուրկ չէ վեր առնել թէ ինչպէս ինկաւ Ալեքսանդրապոլը:

Թուրք հրամանատարութիւնը կը պահանջէ վերջնագրով մը Զիւնկէլիէն, Բաթումի մէջ, չորս օրուայնթացքին յանձնել Ալեքսանդրապոլը Թուրքերուն: ընթացքին յանձնել Ալեքսանդրապոլը հեռագրութիւն նախագահը, փունդրկովկասեան պատուիրակութեան նախագահը, փունդրկովկասեան պատուիրակութիւն նախագահը, թիֆլիսի պետական գործադրութիւն հեռագրով հաղորդելու Թիֆլիս, թղթատարով կը դրկէ:

Մինչև նամակը կը հասնի, չորս օրուան պայմանաժամը կը լրանայ ու թուրք բանակը յանկարծ կը սկսած ումբակոծել Ալեքսանդրապոլը: Ինչպէս Կարսի, սկսի ումբակոծել Ալեքսանդրապոլի հսկայական պահեստները նոյնպէս Ալեքսանդրապոլի հսկայական պահեստները կ'անցնին թշնամիին ձեռքը: Ժողովուրդը սարսափակ'անցնին թշնամիին ձեռքը: Կը փախչի և հայ հար կը փախչի գէպի Ղարաքիլիսէ: Կը փախչի և հայ բանակը: Զօրավար նազարեգով նահանջելով գէպի Դիլջան, յուսահատական հեռագիրներ կ'ուղարկէ Դիլջան, Ազգային Խորհուրդին թէ՝ իր մօտ մնացած Թիֆլիս, Ազգային Խորհուրդին թէ՝ իր մօտ մնացած են միայն 300 հոգի և իրեն կը մնայ միայն գերի իյնու Թուրքերու ձեռքը:

“ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ” ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ
ԿԱՄ՝ ԻՆՉՊԵՍ ԹՈՒՐՔ, ՎՐԱՅԻ ՈՒ ՀԱՅ
ԻՐԵՆՑ ԳԼՈՒԽՆ ԱՌԱԾ ԿԸ ՓԱԽԶԻՆ

Վեհիբ փաշայի արշաւանքը դէպի Բագու, թուքով կպցուած Անդրկովկասեան Հանրապետութեան գիմադրական ուժին խորտակումը անողորմ թշնամուն առջեւ, բարոյալքումն ու խուճապը կը հասցնեն իր գագթնակէտին: Մենչեւիկները առաջինը կը մտածեն փրկել իրենց մորթը, գերմանական իմպերիալիզմին հետ լեզու մը գտնելով: Տրապիզոնի մէջ, Պոլսի կառավարութիւնը իր աշխարհակալական ծրագիրներուն իրագործումը յաջողեցուցած էր Կովկասը անջատել տալով Խորհրդային Խուսաստանէն: Բաթումի մէջ, անպահանջեց Կովկասեան երեք ժողովուրդներուն իրարմէ բաժանումը և առանձին պետութիւններու կազմութիւնը, աւելի լաւ տրորելու համար Հայերը Ան իր նոր պայմանները յանձնեց ոչ թէ Անդրկովկասեան պատուիրակութեան նախագահին, այլ առանձին, հայ թուրք, վրացի պատուիրակներուն: Թրքական եաթաղնին տակ, մենչեւիկ, դաշնակ ու մուսավաթ իրենց գլուխն առած փախան ամենքը մէկ կողմ:

Խօսքը տանք այժմ Պ. Ա. Խատիսեանին (*):
«Մայիս 11ին տեղի ունեցաւ առաջին պաշտօնա-

Տես «Մայիս 28ը»: Իրատարակութիւն Դաշնակցութեան, Փառք, 1926:

կան նիստը, ուր մեր պատուիրակութեան նախագահը յայտարարեց, որ Անդրկովկասը հանդիսանում է անկախ պետութիւն, ի վիճակի է ինքնայօժար կերպով հաշտութիւն կնքելու և համաձայն է ընդունելու Բրեստ-Լիտովսկի դաշնագրի պայմանները: Խալիլ բէյը, ի պատասխան մեր յայտարարութեան, ասաց, որ Տրապիզոնի բանակցութիւններից ի վեր շատ բան է փոխվել, որ այժմ այլևս կարելի չէ խօսիլ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի մասին և պէտք է ընդունիլ նոր պայմաններ: Այս խօսքերով նա յանձնեց մեր նախագահին հաշտութեան նոր պայմանները՝ ամփոփեած կնքեած պահարանի մեջ: Մենք գնացինք հիւրանոց և ծանօթացանք պայմաններին: Յիշում եմ շատ լաւ, թէ ինչպէս Քաջազնունին և ևս նայելով պայմաններին կցուած քարտէսին՝ սարսափեցինք. — Ո՛չ միայն կարսը, այլև Ալեքսանդրապոլն ու Սուրբալուն էլ անցնում էին Թիւրքերին: մեզ մնում էր մի փոքրիկ կտոր հող՝ հազիւ 11,000 քառ. քիլոմետր: Մենք հաւաքուեցինք ժողովի և որոշեցինք, որ այդ պայմանները անընդունելի են:

«Պայմաններն ստանայու օրից — մայիս 11ից սկսած մինչեւ մեր վերադարձ Թիֆլիս, մայիսի 27ին, անցաւ 16 օր, ինչե՞ր տեղի ունեցան այդ օրերի ընքում:

«Այդ օրերին նախապատրաստուեց Կովկասի միութեան քայլայումը և երեք անջատ հանրապետութիւնների կազմութիւնը: Այդ 16 օրուայ ընթացքում պարզուեց ամենից առաջ, որ վրացիները միաժամանակ

✓ զաղտնի բանակցութիւններ վարելով Գերմանացիների հետ, Բաթումում՝ զօր մօն. Լոսովի միջոցով և Երելինում գերմ. կառավարութեան հետ՝ պահովել էին իրենց համար Գերմանիայի հովանաւորութիւնը և Վրաստանի սահմանների անձեռնմխելիութիւնը թիւրքական ներխուժման դէպքում: Միւս կողմից, Ազրբեջանցիները պաշտօնական և անպաշտօն բանակցութիւններով հրաւիրում էին Թիւրքերին գալ և զրաւել Աղբբեջանը: Հայերը մնում էին բառիս բուն նշանակութեամբ մինակ՝ երես-երեսի Թիւրքերի հետ: Մայս 15ին գերման պատուիրակութիւնը արդէն Թիֆլուսին էր և գերմանացի զինուրները պահում էին Վրաստանի սահմանները, իսկ մայիս 14ին Թիւրքերը, առանց նախազգուշացման, դրաւել էին Ալեքսանդրապոլը: Այսպիսի պայմանները Հայերին էլ թելադրում էին խնդրել Գերմանացիների պաշտպանութիւնը: Այդ քայլն և արաւ Հայոց Ազգ. Խորհուրդը, որի համար Համօ Օհանջանեան ու Արշակ Զոհրաբեանը եկան Բաթում և ապա մեկնեցին Բերլին:

✓ Հայերի առանձնացումը չափազանց սուր կերպով զգացում էր Բաթումում: Անդրկովկասեան պատուիրակութեան անդամ Թաթարները — Գաջինսկի, Խան Խոյսկի, Ռւսուլզով — իրենց յաւակնուութիւնների մէջ այնքան հեռուներն էին գնում, որ նոյն իսկ Երևանը համարում էին ոչ-հայկական բաղադր և Հայատանին մայրաքաղաք՝ էին թողնում էջմիածինը:

«Այդ օրերին Բաթում եկաւ ծովային նախարար Զէմալ փաշան: Մայիս 22ին նա տեսակցութիւն ունե-

ցաւ կովկասեան պատուիրակութեան հետ: Թաթարների հետ նա խօսեց շատ սրտագին կերպով, Վրացիների հետ՝ բաւական ջերմութեամբ, Հայերի հետ՝ շատ չորս ու պաղ:)Մենք ժողովներ էինք ունենում համարեամիշն օր, և հետզհետէ ստացում էր ընդհանուր համոզում, որ Հայերը, Վրացիներն ու Աղբբեջանցիք կորցնում են ընդհանուր լեզու գանելու հարաւորութիւնը: Մաթարները պատրաստ էին անմիջապէս կընքել հաշտութեան գաշնագիր: Վրացիները փաստորէն վերջ էին տուել պատերազմին: Պատերազմում էին վերջ էին տեղի ունենում Սարդարապատում և Ղարաքիլիսայում, որոնք ցոյց տուին հայ զինուորի ոյժն ու տոկունութիւնը:)

«Թիւրքերը՝ տեսնելով որ Անդրկովկասեան պատուիրակութիւնը պատասխան չի տալիս, սկսեցին շտապեցնել: Մենք՝ հայ, պատուիրակներս, խնդրեցինք շտապեցնել Մայիսի 24.29ի ընթացքին արիւնամիայն Հայերը: Մայիսի 24.29ի ընթացքին արիւնամիայն Հայերը էին տեղի ունենում Սարդարապատում և Ղարաքիլիսայում, որոնք ցոյց տուին հայ զինուորի ոյժն ու տոկունութիւնը:)

«Մինչ Անդրկովկասեան Պատուիրակութիւնը դանդաղում էր, Վրացիք փութով պատրաստում էին ձեւակերպելու Անդրկովկասի բաժանումը, որ, կարծես, զգացում էր օդի մէջ: Մայիսի 26ին, Անդրկովկասկան Սէյմը յայտարարեց ինքն իրեն լուծուած, Անդրկովկասեան Հանրապետութիւնը վերջացած. և նոյն Մայիսի 26ին վրաց Ազգ. Խորհուրդը յայտարարեց

Վրաստանն անկախ հանրապետութիւն։ Դրանից մի օր առաջ Բաթում էր եկել վրաց սոցիալ-դեմոկրատների պարագլուխ ժօրդանիան և իմ հարցին թէ՝ «Ազնուութիւն է նպաստել Կովկասի կազմալուծման, երբ Հայերը մենակ կրիւ են մղում ընդհանուր քշնամու դեմ», պատասխանեց, թէ «Ազնիւ է այն, որ օքտակար է իմ ժողովուրդին»։ (Ստորագծումը մերն է։) 】

Պարոն Խատիսեանն ու Խատիսեանները կը գըտնէին իրենց իսկ խոստովանութեամբ, որ անազնուութիւն մը, վատութիւն մըն էր Վրաստանի «անկախութեան» հռչակումը։ Նո՞յնքան վատութիւն մըն էր նա՛կ, բնականաբար, Հայաստանի «անկախութեան» հռչակումը։

Վ Դաշնակցութիւնը այսօր կը ճգնի խարել ժողովուրդը թէ Մայիս 28ը իր ճիգերուն, իր պայքարներուն արդիւնքն է, իր սեպհական ստեղծագործութիւնը։ Եւ սակայն, անիկա այնքան սարսափած էր իր մեկուսացումէն, որ չհամարձակեցաւ նոյն իսկ գործածել «անկախութիւն» բառը, այլ անուանեց նուրաստեղծ իշխանութիւնը «Հայկական գաւառներու գերագոյն իշխանութիւն»։ 】

Վ Մայիս 28ը եղաւ, ուրեմն, ո՛չ թէ յաղթանակի, այլ պարտութեան, աղէտի (օր մը) ո՛չ թէ ուրախութեան, այլ սուզի օր մը։ Ապացոյց, դաշնակ օրդան «Հորիզոն»ի առաջնորդողները, 1918 մայիս ամսի ամբողջ ընթացքին, որոնցմով ան մոխիր կը ցանէր իր դիմուն Դաշնակցութեան գործած սխալին և ատոր սարսափելի արդիւնքին առջեւ։ 】 Այդ աղէտը անխուսա-

փելի էր այն օրէն, երբ մենչեւիկ, մուսավաթ հակայեղափոխութեան հետ, ան երես դարձուց Խորհրդային Թուսաստանին։

Գաղափար մը տալու համար կատարուած աղէտի մեծութեան մասին, փակենք այս թուցիկ տեսութիւնը վաստակաւոր գրող Լէօփ հետեւեալ նկարագրութեամբ։

Վ Ձեմ մոռանում ես այդ մայիսի 26ը։ Կիրակի օր էր, պայծառ ու սաք։ 】 Հայաստանի կողմից փախածներն ահազին խմբերով անցնում էին Գոլովինսկի պրոսպեկտով դէպի Վլադիկավկասի ճանապարհը։ Թուսաստան գնալու համար։ Ամբոխը ոտով էր, շատ քչերն էին կարողացել ֆուրգոններ վարձել։ Շատապում էին փախչել նախ և առաջ բոլոր Թիւրքահայերը, շատ լաւ իմանալով, որ եթէ գան Թիւրքերը՝ իրանցից մէկն էլ չպիտի ազատուի մահից։ Բայց առ հասարակ մէկն էլ չպիտի ազատուի մահից։ Բայց առ հասարակ իսու, ճապ էր, որ ազգում էր ամենքի վրայ։ Թիֆլիսից իսու, ճապ էր, մինչեւ Գերմանացիների զալը, էլ շատ ու շատ Հայեր, մինչեւ Գերմանացիների զալը, գախել էին դէպի Վլադիկավկազ, ծախելով իրանց վերջին ստացուածքը։ Փողոցների մայթերի վրայ ամէն ամէն տեսակ տնային իրեր, ամագարսուած էին ամէն տեսակ տնային իրեր, անեղէն, կարասիներ։ այդ բոլորը ծախուում էին ոչինչ գնով, որպէս զի փախչելու համար փող ձեռք բերեն։ Վ Աշխարհն իրարով էր անցել. մի ամբողջ ժողովուրդ, անզլուխ և անպաշտպան մնացած, անում էր, ինքն էլ չիմանալով ինչ։ 】 Այդ փախուստը Հնկարագրել է հանչիմանալով ինչ։ Այդ փախուստը Հնկարագրել է հանչիմանալով ինչ։ Վ Ապացոյց, առաջ գախչեալ Վրթանէս Փափաղեանը, որ իբրև Թիւրքագուցեալ Վրթանէս Փափաղեանը, ինքն էլ փախստականների մէջ էր։ Վ Ճանապարհի հայ,

սարսափի ամենազարհուրելին ինգուշների յարձակում-
ներն էին, որոնք միայն թալանելու նպատակ չու-
նէին, այլև կոտորելու, ոչնչացնելու:)

Մայիս 26ին ժողով կար կոնսերվատորիայի դահ-
լիճում և ես այնտեղ էի գնում, երբ ընկայ փախըս-
տականների մեծ հոսանքի մէջ: Տպաւորութիւնը
զարհուրելի էր: Պատմութեան հարիւրաւոր մոայլ էջե-
րից կանգնում էին առջեւս այս դժբաղդ ժողովուրդի
քաշած այսպիսի փախուստները, իրարանցումները,
բնաջնջումները:

✓ Կոնսերվատորիայի ժողովը կուսակցական ժողով
չէր, հաւաքել էր մեծ բազմութիւն բոլոր խաւերից, Պի-
տի խորհրդակցէին, թէ Հայերն ի՞նչ պիտի անէին
Վրաստանի անկախութիւնը յայտարարելուց յետոյ:)
✓ Ես խօսք խնդրեցի և կարծ նկարագրելով այն, ինչ որ
այդ բոպէին կատարւում է զրում, մեծ փողոցի մէջ,
✓ ասացին որ այդ աղէտի պատճառն այն է, որ մենք
մոռացել ենք մեր պատմական ճակատադիրը: Այսօր
մենք փախչում ենք Ռուսաստան: Բայց ինչո՞ւ, միթէ՞
այստեղ Ռուսաստան չէր. ինչո՞ւ բաժանուեցինք, ին-
չո՞ւ ուրիշների կուսակցական հաշիւներին ենթարկուե-
ցինք) Փոքր ենք, տկար և հէնց այդ պատճառով խա-
ղակիք ենք դարձել թուրք փաշաների ձեռքին: Ինչո՞ւ
չենք յայտարարում, որ մենք մի մասն ենք կազմում
այն պետութեան, որ կնքել է Բրեստ-Լետովսկի դաշ-
նագիրը: Թող տյդ պետութիւնն էլ ինքը գործադրէ
իր ստորագրած պարտաւորութիւնը, և մենք կորող
ենք ապահով լինել, որ Թիւրքերը կը վերցնեն միայն
Բաթումը, Կարսը և չեն համարձակուի իրենց թաթը

դնել նաև Ալեքսանդրոպոլի, Երեւանի, Թիֆլիսի վրայ:
✓ Մենք ինքներս թուրացրել ու փոքրացրել ենք մեզ,
զցել ենք մեզ թշնամու բերանը և զարմանում ենք
որ մեզ տրոլում են:) Դուրս եկէ'ք, նայեցէ'ք այդ
մարդկանց՝ դրանք մեր ժողովուրդն են, ժո-
փախչող մարդկանց՝ դրանք մեր ժողովուրդն է անվերջ փախուստների ճա-
ղովուրդ, որ ոչնչանում է անվերջ փախուստների ճա-
ղովուրդ: Մինչեւ ե՞րբ ոչնչանայ:

Մինձ պատասխանեցին, թէ բանը բանից անցել է, և
Հայերը մենակ ոչինչ չեն կարող անել և նրանց
մնում է հետեւել միւսների օրինակին: Եւ այդպէս
էլ եղաւ»:)

Մինչեւ ե՞րբ ոչնչանայ: Մինչեւ այն ժամանակ,
երբ Դաշնակցութիւնը կը դադրի գոյութիւն ունե-
նալէ, կը դադրի նստելէ դադրութահայութեան վզին:
Երկրի հայ աշխատաւորութիւնը փշրեց այդ ա-
րիւնախում վիշապին թունաւոր ժանիքները:

Գաղութահայ աշխատաւոր զանգուածներուն կը
մնայ հետեւիլ իրենց եղբայրներուն օրինակին:

Այլուրէս, Վաշնակները իրենց Մայիս 28երով, Ապ-
րիլեան սպատօներով, Խանասորի արշաւանքներով,
Օսմանեան պանքայի ցոյցերու տարեգարձերով կը
շարունակեն յառաջ բերել նոր ջարդեր, նոր գաղթեր
ու նոր կատաստրօֆներ, այսինքն կազմակերպել հայ
ու տառապող ու տառապող բազմութիւններու ոչնչա-
ցումը:)

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԱՇՆԱԿ ՃԻՐԱՆՆԵՐՈՒՄ ՄԵԶ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Պատօնական «Զանգ» թերթին. —

«Օր չի անցնում, որ այս կամ այն թաղաժառում
մի տուն չի կողոպտուի:

Երեւանի մէջ բոյն են դրել ինչ որ շականեր
(աւաղակախմբեր), որոնք սիստեմատիկ կերպով ահա-
բեկման մէջ են դրել ազդաբնակչութիւնը:»

«Յառաջ»են (թիւ 24, 1919 թ.) Ս. Վարդեանի
խմբագրական. —

«Տաճիկների գործած բարբարոսութեան պակասը
լրացնում են մեր բարբարոսները, գիւղական տղուկ-
ները և զանազան աւազակարին հակումների տէր ան-
ձինք, շատ տեղեր կառավարական պաշտօնեաների ծա-
ծուկ աջակցութեամբ, նոյն իսկ յաւանի գործակցու-
թեամբ:»

Գիւղում ոչ օրէնք կայ, ոչ իշխանովմիւն:
Գիւղը բառիս բուն նշանակութեամբ հեծում է բար-
դախնդիր սրիկաների ձեռքին: Գիւղացին չի իմանում,
ում դիմի, ի՞նչպէս պաշտպանի իր իրաւունքները:
Առանց կաշառքի գործ չի կարելի անել, իսկ մեր գիւ-
ղացու մէջ ուժ չի մնացել ոչ միայն կաշառք տալու,

ալլ և իր սոված զաւակներին մի կտոր հաց անդամ
ձաբելու»

Ն. Աղբայեան («Յառագ» 1920 թի. 108, 114)

«Զարմանալի բան, պետութիւնը ռամկավոր, կուսակցութիւնն ու պարլամենտը ռամկավար, պաշտօնէութիւնը ռամկավար, և ռամկիի եղն ու ոչխարը գնում է չնչին գնով հացի դէմ, և մահամերձ երեխան թքոտ մատով ալիւր է լիզում, չկարողանալով հաց թխելուն սպասել Պիտի հասնի՝ վերջապէս մի զօրեղ բազուկ հորերից հացը հանելու և գոմերից անասունը և բաշխելու կարիքաւորներին Մի՞թէ սեփականութիւնը թանկ է մարդկային կեանքից և մի՞թէ դարձեալ ժանիքաւորն է այս աշխարհի տէրը, չնայած հանրային և պետական կեանքի խորին յեղաշրջումին:»

Զինուրական նախարար գեներալ Հայովերտնանի
№ 13 հրամանագիրը. —

«Ըմէն օր ստանում եմ գողքներ և արձանագրութիւններ զօբքերի կողմից բնակչութեան վրա, կատարուած անկարգութիւնների յասին. Ոչ միայն առանձին զինւորներ, այլև ջոկատներ, ենթասպաների, աւագենթասպանների, (մէկ ուրիշ զեկուցում-շրայնագրի մէջ կը յիշուին դալի Ղազարի և Նժդի հի անունները) անձնիշխանաբար ազգաբնակչութիւնից կը գերցնեն հաց, անասուններ և ուրիշ մթերքներ, կը խլեն նոյնպէս դրամ և արժէքաւոր իրեր, տնալին գոլք: Որո՞նք որ կ'ընդդիմանան կ'ենթարկուին ծեծի և գնդակահարութեան:

ՉԵՄ Կարող թոյլ տալ նյան դբութիւն, երբ զօր-
քերը, որոնք պիտի պաշտպանեն ժողովուրդին արտա-
քին թշնամիների առաջ, երենք կը դառնան ժողովրդի
թշնամիներ, երբ դժբաղդ ազգաբնակչութիւնը իր իսկ
զօրքի անկարգութիւնից փրկուելու համար պատրաստ
է փախչել Տաճկաստան և ընդունել տաճկահպատակու-
թիւն և յահմեգականութիւն, միայն թէ ազատուի
զօրքերի ասպատակութիւնից . . . »

Ա. Խաչիսեան՝ «Հայաստանի Հանրապետութեան պահպանումը ու զարգացումը» յօդուածարքին մէջ («Հայաստանի», 1926 թ. մայիս, թիւ 7, էջ 53). —

«Նոյն իսկ մեր անկախութեան ձանաչումը պարիզի գերագոյն Խորհրդի կողմից մեզ թւում է նրանց կողմից իբրև մի միջոց պոլշելիզմի դէմ կոռուպտուհամարը։ Այս միտքը մեզ թելադրում է ան պայմաններից, որոնց մէջ տեղի ունեցաւ արդ յարտարարութիւնը»

Դենիկինեան բանակի խայտառակ պարտութեան եւ կարմիր բանակի պանծալի յաղբանակի օրերուն՝ «պի-ւանագէս» Ա. Անարտնեան կը տեսակցի Լոյդ Զորչի և Զքրչիի հետ եւ 1920 րուի յունուար 21ին, թիւ 76 նա-մակին մէջ (Պետական արխիվ, զորձ. թիւ 317) կը գրէ աւրտին գործոց նախարար Ա. Խափիսեանին. —

«Մեզ զմռապէս խոստացան շտապով ռազմաճթերք
ռւղարկել Հայաստան։
Թուշեւիկների առաջխաղացումը և գենհիկինի ան-
յոյս պարտութիւնը ընդհանուր անհանհասութիւն է

պատճառում քաղաքական շրջաններին: Երկիւղ են
կրում, որ Արեւելքը մինչեւ իր հեռաւոր անկիւնները
կը բռնկուի բոլցեւիկեան հրդեհով: Սշխատում են
բոլցեւիկների առաջը փակել գէթ կովկասեան լեռնե-
րում: Ադրբեջանի և Վրաստանի ներկայացուցիչները
— Թոփչիբաշեւ, ինչպէս և Զինէիձէն, Շերեթելին և
Աւալով, Կոնսէյլ Սիւլլուսին (զերագոյն իորհրդի)
երեք օր առաջ հանդիսաւոր խոստումն արին կոռւել
բոլցեւիկների գէմ իրենց բանակներով, եթէ նրանց
զէնք ու ռազմամթերք մատակարարուի: Կոնսէյլ Սիւլ-
լուսը վճռել է նրանց ևս զէնք տալ:

